ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՄԽ-05

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի

Թիվ 5 նիստի

20-ը նոյեմբերի 2023թ.

Աժ 314 սենյակ, ժ.10:00

Ս.թ. նոյեմբերի 20-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 5-րդ նիստը, հետևյալ օրակարգով՝

Օրակարգ՝

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների թափուր պաշտոններում թեկնածուների ընտրության մրցույթի Հարցազրույցի փուլի անցկացում,
2. Մրցույթի արդյունքների ամփոփում, մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուների ցուցակի հաստատում: Մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուների ցուցակի և որոշման ներկայացնում Աժ նախագահին:

Խորհրդի բոլոր հինգ անդամները մասնակցում էին նիստին:Նիստը վարում էր՝ Արթուր Հովսեփյանը:

Նիստին մասնակցում էր նաև Աժ աշխատակազմից Դիաննա Աթոյանը՝ նիստի արձանագրումն ապահովելու համար:

| | |
|---|---|
| Օրակարգի<br><br>1-ին հարց | Ա.Հովսեփյանը ներկայացրեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտության մրցույթի Հարցազրույցի փուլի անցկացման կանոնները:<br><br>Ժամը 10:20-ին սկսվեց հավակնորդների հարցազրույցի փուլը՝ հետևյալ հաջորդականությամբ՝<br>Նարինե Ավետիսյան- ժ.10:20-11:50, զեկուցող՝ Արուսյակ Ջուլհակյան<br>Հայկուհի Հարությունյան- ժ. 12:00-13:30, զեկուցող՝ Արթուր Հովսեփյան<br><br>Հովհաննես Նալբանդյանը 20.11.2023թ. Աժ աշխատակազմին ներկայացրել էր դիմում, որով խնդրել էր Մրցութային խորհրդի անդամներին տեղեկացնել, որ վերջինս վատառողջ լինելու պատճառով չի կարող մասնակցել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի |

| | |
|---|---|
| | թափուր պաշտոնում թեկնածուի ընտության մրցույթին: |
| Օրակարգի<br><br>2-րդ հարց | Խորհուրդը ամփոփելով արդյունքները որոշեց հաղթողներին և առաջարկեց Խորհրդի անդամ Արուսյակ Զուլհակյանին Խորհրդի որոշումը ներկայացնել Ազգային Ժողովի նախագահին: |
| *Խորհրդի որոշումը* | *Խորհուրդը որոշեց մրցույթի հաղթողներ ճանաչել Նարինե Ավետիսյանին և Հայկուհի Հարությունյանին, հաստատեց մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուների ցուցակը, ինչպես նաև որոշեց հանձնարարել Արուսյակ Զուլհակյանին ՝թեկնածուներ ընտրելու մասին Խորհրդի որոշումը և մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուների ցուցակը ներակայացնել Ազգային Ժողովի նախագահին:* |

Նիստը վարող՝ Ա. Հովսեփյանը